Հեղինակային բացառիկ իրավունքի պայմանագիր

ք. Երևան 16.07.2013թ.

Երկու հազար տասներեք թվականի հուլիսի տասնվեցին

«Անտարես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն /հրատարակչությունը/, գտնվելու վայրը՝ քաղաք Երևան, Մաշտոցի 50ա/1, որի լիազորված անձ հանդես է գալիս Հռիփսիմե Հրազդանի Մադոյանը, [redacted] հաշվառված [redacted] ,այսուհետև՝ Հրատարակիչ՝ մի կողմից, և դասագրքերի («Քիմիա 7», «Քիմիա 8», «Քիմիա 9»,) մասնագիտական խմբագիր և «Քիմիա 7-9 ՈՒՁ» հեղինակ Կարինե Գևորգի Ավետիսյանը [redacted], հաշվառված [redacted]) այսուհետև՝ Հեղինակ՝ մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում են հետևյալի մասին

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Հեղինակը պարտավորվում է ԴՇՀ-ի պատվերով սահմանված ժամանակահատվածում կազմել, խմբագրել, վերամշակել և հրատարակչությանը հանձնել «Քիմիա 7», «Քիմիա 8», «Քիմիա 9» դասագրքերը և «Քիմիա 7-9» ուսուցչի ձեռնարկը՝ այսուհետև Նյութ

1.2 Հեղինակը պարտավոր է Նյութը հանձնել էլեկտրոնային կրիչով, խմբագրված և ավարտուն տեսքով, համապատասխանեցված ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական ուսումնական ծրագրին ու ժամաքանակին՝ հետագա արմատական փոփոխությունները բացառող վիճակում

1.3 Սույն պայմանագրի առարկա հանդիսացող Նյութի հրատարակման իրավունքը պատկանում է Հրատարակչին: Հեղինակը իրավունք չունի տրամադրելու դրանք որևէ այլ հրատարակչության ամբողջովին կամ հատվածաբար, վերամշակված, փոփոխված ձևով

1.4 Ինչպես նաև Հեղինակը պարտավորվում է ոչ մի կերպ, ուղղակի թե անուղղակի ձևով չօժանդակել, չհամագործակցել որևէ այլ հեղինակային խմբի և որևէ այլ հրատարակչության հետ նույն դասագրքերի պատրաստման համար

1.5 Հրատարակչական աշխատանքների առաջին փուլի՝ համակարգչային շարվածքի իրականացումից հետո Հեղինակը պարտավոր է կատարել Նյութի առաջին ընթերցումը

1.6 Հրատարակիչը իրավունք ունի առանց լրացուցիչ վճարումների պահանջելու Հեղինակից կատարել Նյութի որոշակի փոփոխություններ, լրացումներ կամ կրճատումներ, եթե դրանց անհրաժեշտությունը թելադրված է օբյեկտիվ նկատառումներով

1.7 Նյութն ընդունելուց հետո Հրատարակիչը պարտավորվում է կատարել հրատարակչական և նախատպագրական բոլոր աշխատանքները

2.Վճարման ձևն ու ժամկետները

Հրատարակիչը կատարողին վճարում է հետևյալ կերպ.

2.1 «Քիմիա 7», «Քիմիա 8», «Քիմիա 9» դասագրքերի և «Քիմիա 7-9 ՈՒՁ» -ի համար Հրատարակիչը Հեղինակին վճարում է [redacted] ՀՀ դրամ Մրցույթը չշահելու դեպքում կանխավճարները չեն վերադարձվում

2.2 Շահելու դեպքում Հրատարակիչը [redacted] օրինակ տպագրության դեպքում Հեղինակին վճարում է ևս [redacted] ՀՀ դրամ «Քիմիա 7», «Քիմիա 8», «Քիմիա 9» դասագրքերի և «Քիմիա 7-9 ՈՒՁ» համար:

2.3 [redacted] օրինակ տպագրության դեպքում Հրատարակիչը Հեղինակին վճարում է [redacted] ՀՀ դրամ «Քիմիա 7», «Քիմիա 8», «Քիմիա 9» դասագրքերի և «Քիմիա 7-9 ՈՒՁ» համար

2.4 Շահելու դեպքում Հրատարակիչը յուրաքանչյուր գրքի համար վճարում է ԴՇՀ-ի կողմից՝ տվյալ գրքի գումարը վճարելուց հետո 15 աշխատանքային օրում

2.5 Բոլոր վճարումները կատարվում են ՀՀ դրամով՝ վճարվող գումարից հարկերի նվազեցումով

2.6 Մրցույթը չշահելու դեպքում Հրատարակիչը չի պարտավորվում հրատարակել Նյութը

2.7 Մրցույթում շահելու դեպքում, անկախ տպաքանակից, Հրատարակիչը Հեղինակին անվճար հատկացվում է ընդհանուր 5 օրինակ դասագիրք

3. Եզրափակիչ դրույթներ

3.1 Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ եթե բանակցությունները արդյունք չեն տալիս, դատական կարգով:

3.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

3.3 Սույն պայմանագրի բոլոր լրացումները, փոփոխությունները, պայմանագրի լուծումը կատարվում է կողմերի համաձայնությամբ՝ նոտարական վավերացմամբ:

3.4 Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, չորս օրինակից: Երեք օրինակները տրվում են Կողմերից յուրաքանչյուրին, մեկը պահվում է նոտարական գրասենյակում: Բոլոր օրինակներն ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերի իրավաբանական հասցեները

Հրատարակիչ՝

Գործադիր մարմնի ղեկավար լիազորված անձ՝ *Հռիփսիմե Հրազդանի Մադոյան*

«Անտարես» ՍՊԸ, Մ.Մաշտոցի 50ա/,
ՀՎՀՀ 02519531,«Էյչ Էս Բի Սի Հայաստան» Բանկ
21700 002-031987-001

Հեղինակ՝

Կարինե Գևորգի Ավետիսյան
անձնագիր՝ [redacted],
[redacted],
հասցե՝ք. [redacted]

Երկու հազար տասներեք թվականի հուլիսի տասնվեցին սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ «ԿԵՆՏՐՈՆ» նոտարական տարածքի նոտար՝ Աիդա Աբրահամյանի կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ,նրանց ինքնությունը և գործունականությունը ստուգված է

Գրանցված է սեղանամատյանում՝ 3296
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար՝ համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների

Նոտար Ա. Աբրահամյան

Պայմանագիր

ք. Երևան երկու հազար տասնմեկ թվականի մարտի քսանմեկին

21.03.2011թ.

«Անտարես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն /հրատարակչությունը (գտնվելու վայրը՝ քաղաք Երևան, Մաշտոցի 50ա/1) որի լիազորված անձ հանդես է գալիս Հռիփսիմե Հրազդանի Մադոյանը (անձն. [redacted] տրված [redacted] բնակվող ք. Երևան, [redacted] լիազ. տրված 21.03.2011թ.-ին,) այսուհետև՝ Հրատարակիչ, մի կողմից, և դասագրքերի ու ձեռնարկների («Մաթեմատիկա 5-րդ դասարան», «Մաթեմատիկա 6-րդ դասարան», «Մաթեմատիկա 5-6 ուսուցչի ձեռնարկ»,«Հանրհաշիվ 7-րդ դասարան», «Հանրահաշիվ 8-րդ դասարան», «Հանրահաշիվ 9-րդ դասարան», «Հանրահաշիվ 7-9 ուսուցչի ձեռնարկ»)այսուհետև՝ հեղինակային նյութ, հեղինակ Ռուբիկ Ավետիսի Ավետիսյանը, (անձն. [redacted], տրված [redacted] վավ. է մինչև [redacted] հաշվառված ք. Երևան, [redacted].) այսուհետև՝ Հեղինակ մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում են Հայաստանում հանրակրթական դպրոցի 2011-2012 ուսումնական տարվա դասագրքերի ստեղծման և ՀՀ ԿԳՆ-ի մրցույթին մասնակցելու նպատակով համագործակցության մասին:

Ընդհանուր դրույթներ

1. Հրատարակիչը պարտավորվում է իր միջոցներով հրատարակության պատրաստել և ՀՀ ԿԳՆ-ի հետ կնքվելիք պայմանագրով նախատեսված տպաքանակով լույս ընծայել Հեղինակի ներկայացրած դասագրքերը և ձեռնարկը:
2. Հեղինակը սույն պայմանագրով Հրատարակչին է հանձնում

   ա) «Մաթեմատիկա 5-րդ դասարան», «Մաթեմատիկա 6-րդ դասարան» դասագրքերի, «Մաթեմատիկա 5-6 ուսուցչի ձեռնարկի» վերախմբագրված, լրացված, փոփոխված տարբերակների,

   բ) «Հանրահաշիվ 7-րդ դասարան», «Հանրահաշիվ 8-րդ դասարան», «Հանրահաշիվ 9-րդ դասարան» դասագրքերի, «Հանրահաշիվ 7-9 ուսուցչի ձեռնարկի» թարգմանության հեղինակային բացառիկ իրավունքները:
3. Հրատարակիչը պարտավորվում է իր միջոցներով հրատարակության պատրաստել և ՀՀ ԿԳՆ-ի հետ կնքվելիք պայմանագրով նախատեսված տպաքանակով լույս ընծայել Հեղինակի ներկայացրած դասագրքերը և ձեռնարկները:
4. Հեղինակը պարտավորվում է սույն պայմանագրով նախատեսված ժամկետում Հրատարակչին ներկայացնել հեղինակային նյութը, որը պետք է համապատասխանի Հրատարակչի նախապես ներկայացրած պահանջներին:
5. Հեղինակը հեղինակային նյութը Հրատարակչին է ներկայացնում էլեկտրոնային տեսքով, խմբագրված և ավարտված՝ հետագա արմատական փոփոխությունները բացառող վիճակում:

6. Հեղինակը երաշխավորում է, որ Հրատարակչին ներկայացված դասագրքերը և ձեռնարկը չեն պարունակում գրագողության տարրեր, որոնք կարող են հետագայում վիճաբանական իրավիճակներ ստեղծել այլ հեղինակների հետ:
7. Նման իրավիճակների դեպքում Հեղինակը պատասխանատու է այլոց հեղինակային իրավունքների դեմ կատարած ոտնձգությունների հետևանքով Հրատարակչի կրած բարոյական և նյութական վնասների համար:
8. Հեղինակը պարտավորվում է հեղինակային նյութը համապատասխանեցնել Հրատարակչի սկզբունքային պահանջներին, զերծ մնալ այն ամենից, ինչը կարող է բարոյական և նյութական վնաս հասցնել Հրատարակչին:
9. Հեղինակային նյութն ընդունելուց հետո Հրատարակիչը պարտավորվում է կատարել հրատարակչական և նախատպագրական բոլոր աշխատանքները:
10. Հրատարակիչը այդ աշխատանքների ընթացքում իրավունք ունի պահանջելու Հեղինակից կատարել որոշակի փոփոխություններ, լրացումներ կամ կրճատումներ հեղինակային նյութի մեջ, եթե դրանց անհրաժեշտությունը թելադրված է օբյեկտիվ նկատառումներով:
11. Եթե Հեղինակի ներկայացրած հեղինակային նյութի տեքստը լեզվական առումով արմատական խմբագրության կարիք է զգում, ապա Հրատարակիչը վարձում է անկախ խմբագրի:
12. Նկարչական և իլյուստրացիոն բոլոր նյութերը, որ կգնվեն Հրատարակչի կողմից, նրա սեփականությունն են և վերադարձի կամ երրորդ անձի տրվելու ենթակա չեն:
13. Հրատարակչական աշխատանքների առաջին փուլի՝ համակարգչային շարվածքի իրականացումից հետո հեղինակային նյութերի առաջին ընթերցումը կատարում է Հեղինակը:
14. Ընթացիկ խմբագրական և սրբագրական աշխատանքները մտնում են Հրատարակչի ծախսերով կատարվող հրատարակչական աշխատանքների մեջ:
15. Գրքերի ֆորմատը և շապիկի ձևավորումը, տպաքանակը և վաճառքի գինը, գովազդի միջոցների և ծավալների ընտրությունը Հրատարակչի բացառիկ մենաշնորհն են:
16. Սույն պայմանագրի առարկա հանդիսացող դասագրքերի և ձեռնարկի հրատարակչական իրավունքը պատկանում է Հրատարակչին: Հեղինակը իրավունք չունի տրամադրելու դրանք որևէ այլ հրատարակչության ամբողջովին կամ հատվածաբար, վերամշակված, փոփոխված կամ թարգմանված ձևով:
17. Հրատարակչական իրավունքը սույն պայմանագրի առարկա դասագրքի և ձեռնարկի նկատմամբ պահպանվում է անժամկետ:
18. Հրատարակչական իրավունքի գործողության ողջ ժամկետի ընթացքում Հրատարակիչը և Հեղինակը պարտավորվում է առաջնորդվել փոխադարձ բարենպաստության սկզբունքով:

Մասնավոր դրույթներ

19. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ պայմանավորվում են համագործակցել Հայաստանի հանրակրթական դպրոցների դասագրքերի 2011-2012 ուսումնական տարվա հրատարակման ՀՀ կրթության և գիտության նախարարության մրցույթին մասնակցելու մասին:

20. Հեղինակը պարտավորվում է դասագրքերի բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական ուսումնական ծրագրին ու ժամաքանակի

21. Հեղինակը մինչև սույն թվականի մարտի 20-ը պետք է հանձնի Հրատարակչին «Մաթեմատիկա 5-րդ դասարան», «Մաթեմատիկա 6-րդ դասարան», «Հանրահաշիվ 7-րդ դասարան», «Հանրահաշիվ 8-րդ դասարան» դասագրքերը, «Մաթեմատիկա 5-6» և «Հանրահաշիվ 5-6 » ուսուցչի ձեռնարկների 60 (վաթսուն) տոկոսը և «Հանրահաշիվ 8-րդ դասարան» դասագրքի 40 (քառասուն) տոկոսը:

22. Դասագրքերի և ձեռնարկի վերջնական տարբերակները, հաղթելու դեպքում, Հեղինակը պետք է ներկայացնի մինչև 2011թ. հունիսի 15-ը:

23. Բոլոր վճարումները կատարվում են ՀՀ դրամով՝ վճարվող գումարից հարկերի նվազեցումով:

24. Ելնելով ԴՇՀ վերոհիշյալ մրցույթի արդյունքներից, Հրատարակիչը պարտավորվում է վճարել Հեղինակներին հետևյալ կարգով.

ա) Հրատարակիչը Հեղինակին կանխավճար չի վճարում:

բ) հաղթելու դեպքում Հրատարակիչը Հեղինակին վճարում է [redacted]) ՀՀ դրամ [redacted]) տպաքանակի դեպքում:

գ) [redacted] տպաքանակի դեպքում Հրատարակիչը Հեղինակին վճարում է [redacted]) ՀՀ դրամ:

դ) Ուսուցչի ձեռնարկն իրականացվում է, բայց դրա արժեքը չի հաշվվում:

ե) Հրատարակիչը գումարը վճարվում է ԴՇՀ-ի կողմից վերջնավճարմը կատարելու հետո՝ 25 (քսանհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

զ) պարտվելու դեպքում Հրատարակիչը չի պարտավորվում վճարել Հեղինակին և հրատարակել վերոնշյալ դասագրքերը:

25. Դասագրքերի վերահրատարակման ժամկետները և տպաքանակը որոշում է Հրատարակիչը: Վերահրատարակությունն իրականացնելու համար Հեղինակի հատուկ թույլտվություն չի պահանջվում, սակայն Հրատարակիչը պետք է Հեղինակի հետ քննարկի դասագրքերի և ձեռնարկի հնարավոր մասնակի բարեփոխումների հարցը:

26. Մրցույթը շահելու դեպքում, անկախ տպաքանակից, Հեղինակին անվճար հատկացվում է 5 օրինակ դասագիրք և տրվում է հրատարակչության վաճառքի գնով դասագրքեր գնելու հնարավորություն (առևտրական տպաքանակ իրականացնելու դեպքում):

27. Մրցույթի համար պատրաստվող դասագրքերի ցանկացած հատվածի հրատարակչական իրավունքը պատկանում է Հրատարակչին: Հեղինակն իրավունք չունի այն հանձնելու որևէ երրորդ կողմի ամբողջությամբ կամ մասամբ:

28. Հեղինակը ՀՀ ԿԳՆ մրցույթին պատրաստվող և սույն պայմանագրի առարկա հանդիսացող դասագրքերն ու ձեռնարկը կազմելիս պարտավորվում է չհամագործակցել որևէ այլ հեղինակային խմբի և որևէ այլ հրատարակչության հետ նույն խմբաքանակի համար նախատեսվող դասագրքերի պատրաստման համար, ինչպես նաև ոչ մի կերպ, ուղղակի թե անուղղակի ձևով չօժանդակել որևէ երրորդ կողմի՝ հեղինակ թե հրատարակիչ, մրցակից դասագրքերի ներկայացման համար բոլոր այն խմբաքանակներում, որոնցում մասնակցում է Հրատարակիչը:

29. Սույն պայմանագիրը ենթադրում է ՀՀ ԿԳՆ մրցույթի հաջորդ փուլերին Հեղինակի և Հրատարակչի համագործակցությունը, եթե այդ փուլերում

նախատեսվում է տվյալ առարկայի որևէ այլ խմբաքանակ, եթե Հեղինակը պատրաստում է այդ խմբաքանակով նախատեսված դասագրքերը, և եթե Հրատարակիչը մասնակցելու է մրցույթին այդ խմբաքանակի շրջանակներում:

Եզրափակիչ դրույթներ

30. Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ եթե բանակցությունները արդյունք չեն տալիս, դատական կարգով:
31. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունների կատարումը:
32. Սույն պայմանագրի բոլոր լրացումները, փոփոխությունները, պայմանագրի լուծումը կատարվում է կողմերի համաձայնությամբ՝ նոտարական վավերացմամբ:
33. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, չորս օրինակից: Երեք օրինակները տրվում են Կողմերն, մեկը պահվում է նոտարական գրասենյակում: Բոլոր օրինակներն ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերի իրավաբանական հասցեները

Հրատարակիչ՝

«Անտարես» ՍՊԸ
Մ.Մաշտոցի 50ա/1
ՀՎՀՀ 02519531
«էյչ էս Բի Սի Հայաստան» Բանկ
21700 002-031987-001

Լիազորված անձ՝
Հռիփսիմե Հրազդանի Մադոյան ([redacted]
հաշվառված ք. Երևան, [redacted]

Հեղինակ՝

Ռուբիկ Ավետիսի Ավետիսյան, (անձն. [redacted]. հաշվառված ք. Երևան, [redacted])

Երկու հազար տասնմեկ թվականի մարտի քսանմեկին սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ «ԿԵՆՏՐՈՆ» նոտարական տարածքի նոտար՝ ԱԻԴԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ, նրանց ինքնությունը և գործունականությունը ստուգված է:

Գրանցված է սեղանամատյանում——— 1444

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար՝ համաձայն ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների

Նոտար Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հեղինակային բացառիկ իրավունքի պայմանագիր

ք. Երևան 15.07.2012

«Անտարես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն /հրատարակչությունը/, գտնվելու վայրը՝ քաղաք Երևան, Մաշտոցի 50ա/1, որի լիազորված անձ հանդես է գալիս Հռիփսիմե Հրազդանի Մադոյանը, անձն. [redacted]ի կողմից, հաշվառված ք.Երևան, [redacted] լիազ. տրված 15.07.2013-ին,այսուհետև՝ Հրատարակիչ՝ մի կողմից, և դասագրքերի՝ «Ֆիզիկա 7», «Ֆիզիկա 8», «Ֆիզիկա 9», մասնագիտական խմբագիրներ և «Ֆիզիկա 7-9 ՈՒՋ» հեղինակներ Արտավազ Մամյանը /անձ. [redacted], տրված [redacted] վավեր մինչև [redacted]ի կողմից,հասցե՝ ք.Երևան, [redacted]6/ և Նարինե Նուրբեկյանը, անձ. [redacted], տրված [redacted]ն, վավեր մինչև [redacted] կողմից, հասցեն ք. Երևան, [redacted]3/,այսուհետև՝ Հեղինակ՝ մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ կնքում են սույն բացառիկ պայմանագիրը հետևյալի մասին

Ընդհանուր դրույթներ

1. Հեղինակը պարտավորվում է Հրատարակչի պատվերով սահմանված ժամանակահատվածում խմբագրել, վերամշակել և հրատարակչությանը հանձնել «Ֆիզիկա 8», «Ֆիզիկա 9» դասագրքերը, «Ֆիզիկա 7 -9» ուսուցչի ձեռնարկը, այսուհետև Նյութ
2. Սույն բացառիկ պայմանագրի առարկա հանդիսացող Նյութի հրատարակման իրավունքը պատկանում է Հրատարակչին և իրավունք ունի հրատարակել առավելագույնը [redacted] տպաքանակով: Հեղինակը իրավունք չունի տրամադրելու դրանք որևէ այլ հրատարակչության ամբողջովին կամ հատվածաբար, վերամշակված կամ փոփոխված ձևով
3. Հեղինակը պարտավոր է հանձնել Նյութը մինչև
   - «Ֆիզիկա 7» 2013 թվականի օգոստոսի 1-ը
   - «Ֆիզիկա 8» 2013 թվականի օգոստոսի 1-ը
   - «Ֆիզիկա 9» 2013 թվականի դեկտեմբերի 15-ը
   - «Ֆիզիկա 7 -9» ուսուցչի ձեռնարկը՝ 2013 թվականի օգոստոսի 1-ը
4. Նյութի հանձնումն ուշացնելու դեպքում կարող են կիրառվել տուգանքներ՝ պայմանագրի ընդհանուր արժեքի 0.05 %-ի չափով յուրաքանչյուր ուշացված օրվա համար
5. Հեղինակը պարտավոր է Հրատարակչի պահանջով տեղեկացնել աշխատանքի ընթացքի մասին, ներկայացնել տվյալ ընթացքում արված աշխատանքը
6. Հեղինակը պարտավոր է Նյութը հանձնել էլեկտրոնային կրիչով, խմբագրված և ավարտուն տեսքով՝ հետագա արմատական փոփոխությունները բացառող վիճակում
7. Հեղինակը պարտավոր է հրատարակչական աշխատանքների առաջին փուլի՝ համակարգչային էջադրումից հետո կատարել Նյութի առաջին ընթերցումը
8. Հեղինակը պարտավոր է առանց լրացուցիչ վճարումների կատարել Նյութի որոշակի փոփոխություններ, լրացումներ կամ կրճատումներ, եթե դրանց անհրաժեշտությունը թելադրված է օբյեկտիվ նկատառումներով
9. Հրատարակիչը պարտավորվում է չխախտել Հեղինակի անվան իրավունքը և չհրատարակել կեղծանունով
10. Նյութի խմբագրման ժամանակ ցանկացած արմատական փոփոխություններ կատարելիս՝ Հրատարակիչը պարտավոր է դրանք քննարկել Կատարողի հետ
11. Նյութն ընդունելուց հետո Հրատարակիչը պարտավորվում է կատարել հրատարակչական և նախատպագրական բոլոր աշխատանքները
12. Հրատարակիչը պարտավոր է ճիշտ ժամանակին կատարել բոլոր վճարումները

Վճարման ձևն ու ժամկետները

Հրատարակիչը կատարողին վճարում է հետևյալ կերպ.

1. Հրատարակիչը Հեղինակին վճարում է [redacted]/ ՀՀ դրամ «Ֆիզիկա 7», «Ֆիզիկա 8» և «Ֆիզիկա 9» դասագրքերի համար, որից

1.1Հրատարակիչը կատարողին վճարում է [redacted]/ ՀՀ դրամ կանխավճար «Ֆիզիկա 7», «Ֆիզիկա 8» և «Ֆիզիկա 9» դասագրքերի համար

1.2Մնացած գումարի [redacted]/ ՀՀ դրամը Հրատարակիչը վճարում է ԴՇՀ-ի կողմից «Ֆիզիկա 8» դասագրքի համար նախատեսված գումարի վճարումից հետո 10 աշխատանքային օրում

1.3 Եվս [redacted] ՀՀ դրամը Հրատարակիչը վճարում է ԴՇՀ-ի կողմից «Ֆիզիկա 9» դասագրքի համար նախատեսված գումարի վճարումից հետո 10 աշխատանքային օրում

1.4 Ուսուցչի ձեռնարկի համար առանձին վճար չի նախատեսված

2. Բոլոր վճարումները կատարվում են ՀՀ դրամով՝ վճարվող գումարից հարկերի նվազեցումով
3. Եկամտահարկը կազմում է 10%:
4. Հրատարակիչը Հեղինակին անվճար հատկացվում է 3 օրինակ յուրաքանչյուր գրքից

Եզրափակիչ դրույթներ

1. Համագործակցության ողջ ժամկետի ընթացքում Հրատարակիչը և Հեղինակը պարտավորվում են առաջնորդվել փոխադարձ բարենպաստության սկզբունքով
2. Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Եթե բանակցությունները արդյունք չեն տալիս, դատական կարգով: Տարաձայնությունների դեպքում Կողմերը կարող են լուծարել պայմանագիրը:
3. Պայմանագիրը չեղյալ համարելու դեպքում Հեղինակը վերադարձնում է մինչ այդ վճարված գումարները
4. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ
5. Սույն պայմանագրի բոլոր լրացումները, փոփոխությունները, պայմանագրի լուծումը կատարվում է կողմերի համաձայնությամբ
6. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երեք օրինակից: Երկու օրինակները տրվում են Կողմերից յուրաքանչյուրին, մեկը պահվում է նոտարական գրասենյակում: Բոլոր օրինակներն ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերի իրավաբանական հասցեները

Հրատարակիչ՝
Գործադիր մարմնի ղեկավարի լիազ. անձ՝ Հրիփսիմե Մադոյան
«Անտարես» ՍՊԸ,Մ.Մաշտոցի 50ա/1
ՀՎՀՀ 02519531
«Էյչ Էս Բի Սի Հայաստան» Բանկ
21700 002-031987-001

Հեղինակ՝

Արտավազդ Մամյան
անձնագիր՝ [redacted], վավեր մինչև [redacted] կողմից,
հասցե՝ ք.Երևան, [redacted]

Նարինե Նուրբեկյան
անձնագիր՝ [redacted] տրված [redacted], վավեր մինչև [redacted] կողմից
հասցեն ք. Երևան [redacted]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ, ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ
ՀՈՒԼԻՍԻ ՏԱՍՆՀԻՆԳԻՆ, ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆԵՐԵՔ ԹՎԱԿԱՆԻ,
սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ « Նոր Նորք» նոտարական տարածքի նոտար՝
ՕՍԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՍ կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:
Կողմերի ինքնությունը և գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը նրա ներկայացուցիչների լիազորությունները ստուգված են:
Գրանցված է սեղանամատյանում՝
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար,
համաձայն « Նոտարիատի մասին » ՀՀ օրենքի 15 հոդվածի,
ՆՈՏԱՐ